ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԻԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 68 - 69 (16366) ՇԱԲԱԹ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ, 2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԲԱՐԻ ԵՐԹ, ԴՊՐՈՑ...

ՍԿՍՎԵՑ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

Սեպտեմբերի 14-ին Վրաստանի հանրային բոլոր դպրոցներում սկսվեց նոր ուսումնական տարին:

Ինչպես հայտարարեցին կրթության եւ գիտության նախարարությունում, ազգային ուսումնական ծրագրում, այդ թվում՝ ինկլյուզիվ կրթության համակարգում, կատարվել են որոշակի փոփոխություններ, ներդրվել նորույթներ: Բոլոր աշակերտները կստանան դասագրքերի լրիվ կոմպլեկտը, որը նախատեսված է ուսումնական ծրագրով: Նոր ուսումնական տարվա համար երկրում բացվել է երեք նոր դպրոց, վերանորոգվել՝ 500 կրթօջախ:

Նոր ուստարվա մեկնարկի առիթով, աշակերտներին, մանկավարժներին, ծնողներին շնորհավորական ուղերձներ են հղել Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն:

Վրաստանի նախագահը նոր ուսումնական տարվա մեկնարկին, նախագահական աշխատակազմի ներկայացուցիչների հետ, այցելեց թիվ 1 դասական գիմնազիա. «Ցանկանում եմ այս նշանակալից օրվա կապակցությամբ շնորհավորել բոլոր աշակերտներին, ուսանողներին, նրանց ծնողներին: Առանձնակի ցանկանում եմ շնորհավորել նրանց, ովքեր առաջին անգամ են ոտք դնում դպրոց ու համալսարան»,- հայտարարեց նախագահը:

Սեպտեմբերի 14-ին՝ նոր ուսումնական տարվա առաջին օրը, Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելեց Ծիլկանիի նորակառույց հանրային դպրոց. «Սա նոր դպրոց է, որը կառուցել է մեր կառավարությունը: Այստեղ ստեղծված են բոլոր պայմանները մեր երեխաների դաստիարակության եւ ուսուցման համար: Եթե մենք հավակնում ենք հզոր պետության կազմավորմանը, ապա մենք առաջին հերթին պետք է հոգանք կրթության մասին, քանի որ առանց կրթված սերնդի մեր առաջընթացն ու զարգացումն անհնարին է»,- ընդգծեց վաչապետը:

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱՆԻՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ Է'Լ ԱՎԵԼԻ ԿԱՎԵԼԱՆԱ»

Սեպտեմբերի 14-ին, Վրաստանի կառավարության հերթական նիստում, երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ նոր ուսումնական տարվանից ուսուցիչները կստանան ավելացված աշխատավարձ, իսկ հաջորդ տարվանից այն է'լ ավելի կմեծացվի: Վարչապետի հավաստմամբ, ավելացրած աշխատավարձը լավ ազդակ կհանդիսանա ուսուցիչների համար, քանի որ նրանք արժանի են բարձր վաստակի:

«Այսօր մեկնարկեց նոր ուսումնական տարին: Այդ առթիվ ցանկանում եմ շնորհավորել բոլորին:

Ուզում եմ նշել, որ ուսուցիչների աշխատավարձը բարձրացվել է: Այսօրվանից ուժի մեջ է մտել աշխատավարձի բարձրացման վերաբերյալ կարգադրությունը, եւ հաջորդ տարի եւս այդ միտումը կշարունակվի: Գտնում եմ, որ դա յուրատեսակ ազդակ կհանդիսանա ուսուցիչների համար: Նրանք իրականում արժանի են, որպեսզի պետությունն ըստ արժանվույն գնահատի նրանց աշխատանքը, որը եւ մենք անում ենք: Արդեն երրորդ տարին է, ինչ գործում է աշակերտների համար անվճար դասագրքերի, տրանսպորտից անվճար օգտվելու նախագիծը, ինչն ընդգծում է կրթության կարեւորությունը»,- հայտարարեց վարչապետը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, երկրի սահմանադրության մեջ փոփոխությունների կատարման նախագիծը նախ կքննարկվի պետական սահմանադրական հանձնաժողովի եւ դրա համապատասխան խմբի կողմից:

Խորհրդարանի բյուրոյի նիստում, ընթացակարգի հարցերի կոմիտեն ներկայացրեց տեղեկատվություն սահմանադրական փոփոխությունների նախագծի տակ 80 պատգամավորների ստորագրությամբ ստույգ լինելու վերաբերյալ, որի հիման վրա էլ նախատեսվում է սահմանադրական փոփոխությունների նախագծի քննարկումը:

Ինչպես նշվեց բյուրոյի նիստում, քաղաքական կուսակցությունների

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՆԱՏՕ-ԻՆ»

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին շրջայց է կատարում ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրներով: Նա պաշտոնական այցով եղավ Մերձբալթյան երկրներում, Անգլիայում:

Լոնդոնում, պաշտոնական հանդիպումների ավարտից հետո, Թինա Խիդաշելին հայտարարեց, որ Վրաստանը շուտափույթ ՆԱՏՕ-ին անդամակցելու հույս ունի:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐ

ՀԱՆՐԱՔՎԵ, ՈՐԸ ԿԱՆԽՈՐՈՇԵՑ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄԸ

24 տարի առաջ, Հայաստանի այն ժամանակվա օենսդիր գերագույն մարմնի՝ Գերագույն խորհրդի որոշմամբ, սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց հանրաքվե Խորհրդային Միության կազմից դուրս գալու մասին:

Հայաստանի Գերագույն խորհրդի կողմից 1990 թվականի օգոստոսի 23-ին ընդունված Անկախության հռչակագրի պաշտպանությամբ հանրաքվեում հանդես եկավ ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը:

Հանրաքվեի արդյունքներով, Հայաստանի Գերագույն խորհուրդը սեպտեմբերի 23-ին հռչակեց Հայաստանի անկախությունը:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԷԼ ԱՎԵԼԻ ԵՆ ԽՈՐԱՆՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»»

Սեպտեմբերի 21-ին Հայաստանը նշում է Անկախության տոնը: Տոնի առթիվ մենք հարցազրույց ունեցանք Վրաստանում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի հետ:

- Մեծարգո դեսպան, նախ թույլ տվեք Ձեզ շնորհավորել Հայաստանի Անկախության տոնի առթիվ:

- Շնորհակալություն եմ հայտնում Ձեզ եւ, օգտվելով առիթից, շնորհավորում հայությանը Հայաստանի Անկախության հռչակման 24-րդ տարեդարձի կապակցությամբ, մաղթում բոլորիս նորանոր հաղթանակներ ու ձեռքբերումներ՝ ի բարօրություն մեր անկախ հայրենիքի:

- Պարոն դեսպան, այս տարին ավելի քան հագեցած էր տարբեր միջոցառումներով: 2015 թվականը աչքի ընկավ նաեւ հայ-վրացական հարաբերությունների նկատելի ակտիվությամբ: Խոսքը Վրաստանի եւ Հայաստանի գործադիր ու օրենսդիր մարմինների ղեկավարների, տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների փոխայցերի մասին է, որոնց մասին «Վրաստան» թերթը, հնարավորության սահմաններում, տեղեկացրել է ընթերցողներին: Ինչպե՞ս կբնութագրեիք հայ-վրացական հարաբերությունների ներկա մակարդակը, ի՞նչն է առաջին հերթին բնորոշ Վրաստան-Հայաստան փոխհարաբերություններին:

- Իրոք, այդ առումով տարին ավելի քան հագեցած է: Տարվա մեկնարկին տեղի ունեցավ Վրաստանի խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլու պաշտոնական այցը Հայաստան: Տարբեր ոլորտներում, Հայաստանի համապատասխան գերատեսչությունների հետ համագործակցության խորացման նպատակով Հայաստան այցելեցին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, պատիժների կատարման եւ պրոբացիայի հարցերով նախարար Գիորգի Մղեբրիշվիլին, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՈՒՂԵՐՁ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԸ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍԻՆ

Նախագահի ուղերձում մասնավորապես ասված է. «Անկողմնակալ, քաղաքականապես չեզոք, միայն օրենքի գերակայության վրա հիմնված դատարանի ձեւավորումը հանդիսանում է վրաց ժողովրդի անկապտելի կամքը: Այս գործընթացը պահանջում է պաշտպանություն, հոգատարություն եւ ուժեղացում:

Վերջին մի քանի օրերի ընթացքում երկրում գործող քաղաքական սպեկտրի, ինչպես նաեւ օտարերկրյա պետության իշխանության ներկայացուցչի՝ Վրաստանի նախկին նախագահի կողմից տեղ գտան դատական գործընթացների քաղաքականացման փորձեր:

Քաղաքական նման շարժման պայմաններում իմ աջակցությունն եմ հայտնում դատարավարական ողջ կորպուսին եւ առաջիկայի համար ընդգծում իմ եւ հասարակայնության աջակցությունը ժողովրդական պետության զարգացման ներկայիս դժվարին ուղու վրա»,- ասված է նախագահի ուղերձում:

(Թեմայի շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴԻՐ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներկայացուցիչները խուսափում են սահմանադրական հանձնաժողովի աշխատանքին մասնակցելուց: Նշվեց, որ քաղաքական կուսակցությունները հնարավորինս պետք է ակտիվացնեն աշխատանքը սահմանադրական հանձնաժողովում եւ դրա աշխատանքային խմբերում:

Հիշեցնենք, որ «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից մշակված սահմանադրական փոփոխությունների նախագիծը նախատեսում է բազմամանդատ ընտրատարածքներում համամասնական ընտրակարգով խորհրդարանական ընտրությունների անցկացում: Այդ փոփոխություններով նաեւ նախատեսվում է նվազեցնել ընտրական արգելագիծը՝ 5-ից մինչեւ 4 տոկոսը: Այդ փոփոխությունների ընդունման դեպքում, դրանք ծրագրվում են ուժի մեջ մտցնել 2016 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո:

ՍՏՈՐԱԳՐԱՀԱՎԱՔ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ

Վրաստանում գործող քաղաքական 14 սուբյեկտներ, այդ թվում՝՝ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունները, սկսում են ստորագրահավաք սահմանադրական փոփոխությունների պահանջով: Միջոցառման գլխավոր պահանջն է 2016 թվականի խորհրդարանական ընտրություններն անցկացնել համամասնական ընտրակարգով:

Չորս ամսվա ընթացքում, հարկ է հավաքել 200 հազար ստորագրություն: Միայն դրանից հետո, ընդդիմությունը կարող է խորհրդարանին առաջադրել իր սահմանադրական նախաձեռնությունը: Նշենք, որ խորհրդարանական մեծամասնությունն արդեն ներկայացրել է իր օրենսդրական նախաձեռնությունը, ըստ որի, 2016 թվականի խորհրդարանական ընտրություններն անցկացվելու են խառը՝ մեծամասնական-համամասնական ընտրակարգով, եւ միայն 2020 թվականի ընտրություններում կգործի համամասնական ընտրակարգով ընտրությունների անցկացման սկզբունքը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԹԵԱ ՃՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՎ ԸՆԹԱՆՈՒՄ Է ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՈՎ»

Ելույթ ունենալով Վրաստանի խորհրդարանում անցկացված «Բաց կառավարման գործընկերություն» նախագծի շրջանակներում անցկացված միջազգային խորհրդաժողովում՝ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ճուլուկիանին հայտարարեց, որ Վրաստանը հրաժարվել է հեղափոխություններից եւ ընթանում է էվոլյուցիոն զարգացման ուղիով:

«Խորհրդանշական է, որ այս հանդիպումն անցկացվում է այս պատմական շենքում, որտեղ ստորագրվել է Վրաստանի Անկախության հռչակագիրը, որը դարձել է նաեւ հեղափոխության ականատեսը, սակայն Վրաստանը հրաժարվեց հեղափոխություններից, եւ մենք ընթանում ենք զարգացման ու էվոլյուցիայի ուղիով: Որպես բաց կառավարման գործընկերության կառավարման կոմիտեի անդամ՝ ցանկանում եմ նշել, որ այն նշանակալից դեր է կատարում մեր երկրում: Ցանկանում եմ շնորհավորել Վրաստանի խորհրդարանին եւ մեր պատգամավորներին, որ հենց Թբիլիսիում է անցկացվում օրենսդրական թափանցիկության հարցով աշխատանքային խմբի հանդիպումը, ինչը շատ երկրների ներկայացուցիչների ընձեռում է Վրաստան այցելելու եւ համատեղ որոշումների ընդունման գործընթացին ծանոթանալու հնարավորություն»,- հայտարարեց Թեա Ճուլուկիանին:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՅԱՆ ՔԵԼԻ. «ԿԿԱՐՈՏԵՄ ՉԻԿԱԳՈՅԻ ՊԻՑՑԱՅԻՆ, ԹԵՊԵՏ ՀԱՄՏԵՍ ԿԱՆԵՄ ԽԱՃԱՊՈՒՐԻՆ»

ՅԱՆ ՔԵԼԻՆ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ՆՈՐ ԴԵՍՊԱՆ

Սեպտեմբերի 16-ին Թբիլիսի ժամանեց Վրաստանում ԱՄՆ-ի նոր դեսպան Յան Քելին: Լրագրողների հետ հանդիպմանը նորանշանակ դեսպանը հայտարարեց, որ մտադիր է իր 30-ամյա դիվանագիտական փորձով աջակցել Վրաստանի եվրատլանտյան ինտեգրման ձգտմանը եւ ծառայելու է Վրաստանի ու ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների զարգացմանը:

«Հիմնական գերակայությունը Վրաստանին աջակցելն է, Վրաստանի եւ ԱՄՆ-ի միջեւ երկկողմ հարաբերությունների խորացումը: Բնականաբար, գերակայություն է նաեւ եվրատլանտյան ինստիտուտներին ինտեգրվելու հարցում Վրաստանին աջակցելը: Կարող եմ հավաստիացնել, որ ես լինելու եմ Վրաստանի, նրա ձգտումների եւ Վրաստանի ու ԱՄՆ-ի միջեւ հարաբերությունների խորացման ամենահետեւողական կողմնակիցներից մեկը»,- հայտարարեց Քելին:

«Ինձ համար մեծ պատիվ է Վրաստանում աշխատել որպես ԱՄՆ նոր դեսպան: Առաջին անգամ Թբիլիսիում եղել եմ 1976 թվականին, երբ քոլեջի ուսանող էի: Մեծապես տպավորվել էի քաղաքի գեղեցկությամբ:

ՆԱՏՕ-ում եւ ԵԱՀԿ-ում իմ աշխատանքի փորձից ելնելով՝ առանձնակի հարգանք եմ տածում միջազգային խաղաղության ու անվտանգության գործում Վրաստանի ներդրած ավանդի համար: Որպես ԵԱՀԿ-ում ԱՄՆ դեսպան եւ Մինսկի խմբի համանախագահ՝ լավ ծանոթ եմ տարածաշրջանի մարտահրավերներին, որոնք ծառացած են Վրաստանի առջեւ:

Ես Չիկագոյից եմ: Բնականաբար, ես, կինս՝ Ֆրանչեսկան, զավակներս կկարոտենք Չիկագոյի առասպելական խոր ափսեի մեջ պատրաստած պիցցային եւ մեր սիրելի բեյսբոլի «Չիկագո քափս» թիմին: Սակայն, մեծ հաճույքով համտես կանեմ վրացական խաճապուրին ու կիետեւեմ Վրաստանի ֆուտբոլային թիմերի խաղերին: Բնականաբար, մեծ անհամբերությամբ սպասում եմ վրաց առասպելական հյուրընկալության եւ վրացական հինավուրց արվեստի հետ նոր ծանոթությանը»,- հայտարարեց Յան Քելին:

Սեպտեմբերի 17-ին Վրաստանում ԱՄՆ նոր դեսպան Յան Քելին երկրի նախագահին հանձնեց հավաստագրերը: Արարողության ավարտից հետո տեղի ունեցավ երկրի նախագահի եւ նորանշանակ դեսպանի հանդիպումը, որտեղ քննարկվեցին վրացամերիկյան հարաբերությունների խորացման հեռանկարները:

Սեպտեմբերի 18-ին կայացավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Յան Քելի հանդիպումը: Հանդիպմանը կողմերը քննարկվեցին Վրաստանի եվրոպական ու եվրատլանտյան ինտեգրմանն առնչվող հարցեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԹԲԻԼԻՍԻԻ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԻԳԻ ՈՒԳՈՒԼԱՎԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԿԱԼԱՆՔԻՑ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՎԵՑ

Թբիլիսիի քաղաքային դատարանը, հաշվի առնելով Սահմանադրական դատարանի որոշումը, սեպտեմբերի 18-ին նախնական կալանքից ազատ արձակեց Թբիլիսիի նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային:

Նախօրեին Վրաստանի Սահմանադրական դատարանը, անկախ Վրաստանի պատմության մեջ ընդունեց աննախադեպ որոշում, մասնակիորեն բավարարեց նախկին քաղաքապետ Գիգի Ուգուլավային՝ նախնական կալանքի իննամսյա ժամկետի գերազանցման մասին հայցը: Սահմանադրական դատարանի նախագահ Գիորգի Պապուաշվիլին հրապարակեց որոշում, ըստ որի, քրեադատավարական օրենսգրքի այն նորմը, որը թույլ է տալիս նախնական կալանքում ինն ամսից ավելի կալածյալի արգելափակումը, համարվում է հակասահմանադրական:

Նշենք, որ սեպտեմբերի 17-ին Թբիլիսիի քաղաքային դատարանը բավարարեց նաեւ Գիգի Ուգուլավայի փաստաբանների միջնորդությունը եւ «Իմեդի» հեռուստաընկերության ու Թբիլիսիի կենտրոնի Ռիղեի տարածքի վաճառքի գործի քննությունը հետաձգեց: Այն վերսկսվեց հաջորդ օրը՝ սեպտեմբերի 18-ին:

Սեպտեմբերի 17-ին հատուկ ուղերձով ելույթ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, ով, անդրադառնալով Սահմանադրական դատարանի որոշմանը, հայտարարեց. «Սահմանադրական դատարանի որոշումը հանդիսանում է գերագույն որոշում, եւ ընդհանուր դատարաններին կոչ եմ անում ի կատարում ընդունել Սահմանադրական դատարանի բանաձեւը: Նախագահն ընդգծեց, որ ինքը հանդիսանում է սահմանադրության կատարման երաշխավորը:



ՄԱԿ

ՄԵԿՆԱՐԿԵՑ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 70-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Նյու Յորքում աշխատանքն սկսեց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի հոբելյանական 70-րդ նստաշրջանը: Տարեկան շրջափուլի մեկնարկը ազդարարեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Գի Մունը եւ Վանիայի նախկին ԱԳ նախարար Մորգենս Լիկետոֆտը, որը հունիսին ընտրվել է 70-րդ նստաշրջանի նախագահ: Սպասվում է, որ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 70-րդ նստաշրջանի ընդհանուր քաղաքական բանավեճին կմասնակցեն պետությունների ու կառավարությունների 144 ղեկավարներ, ինչպես նաեւ 46 նախարարներ:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԿԸՆԴՈՒՆԵՆ 120 ՀԱԶԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ

Եվրախորհրդարանը (ԵԽ) պաշտպանել է Եվրամիության երկրներում 120 հազար գաղթականների բաշխման՝ Եվրահանձնաժողովի առաջարկությունը: Այդ հարցով, վերջնական որոշումը պետք է կայացնի Եվրամիության խորհուրդը՝ հանրակցության երկրների ներքին գործերի նախարարների մակարդակով,՝ սեպտեմբերի 22-ին, Բրյուսելում: Եվրոպայի սահմանների վերահսկողության գործակալության՝ Frontex-ի վերջին տվյալներով, տարեսկզբից ԵՄ է ժամանել ավելի քան կես միլիոն գաղթական, մինչդեռ ամբողջ 2014 թվականին այդ թիվը կազմել է 280 հազար:

ՎԱՎԵՐԱՑՎԵՑԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ԵՄ խորհուրդը վավերացրել է մինչեւ 2016 թվականի մարտը ՌԴ-ի եւ Ուկրաինայի ֆիզիկական ու իրավաբանական անձանց դեմ պատժամիջոցների երկարաձգման հարցը, որոնց ԵՄ-ն համարում է Ուկրաինայի տարածքային ամբողջականության եւ սուվերենության խախտման մասնակից:

Նշենք, որ սեպտեմբերի 2-ին ԵՄ երկրների մշտական ներկայացուցիչների կոմիտեն որոշել էր կես տարով՝ մինչ 2016 թվականի մարտը, երկարաձգել գործող անհատական պատժամիջոցները:

ԱԴՐԲԵՋԱՆ ԴԱԴԱՐԵՑՎՈՒՄ Է ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ադրբեջանի խորհրդարանը՝ Միլիմեջլիսը, հավանություն տվեց այն փաստաթղթին, ըստ որի, դադարեցվում է Ադրբեջանի անդամակցությունը Եվրամիության եւ Արեւելյան գործընկերության երկրների խորհրդարանական ասամբլեայում (եվրոնեստ): Ընդունած փաստաթղթի համաձայն, ադրբեջանցի պատգամավորները չեն մասնակցի խորհրդարանական ասամբլեայի կոմիտեների նիստերին: Միաժամանակ, խորհրդարանը կառավարությանը կոչ է արել վերանայել Արեւելյան գործընկերության ծրագրում Ադրբեջանի մասնակցության հարցը: Նշենք, որ Ադրբեջանը Եվրամիության հետ համագործակցության ընդհատման որոշումը ընդունեց այն բանից հետո, երբ սեպտեմբերի 10-ին Եվրախորհրդարանն ընդունեց բանաձեւ, որով դատապարտում էր քաղաքացիական հասարակության դեմ իրականացված բռնամիջոցները:

ՉԻԼԻ

ԵՐԿՐԱՇԱՐԺ՝ ԶՈՀԵՐՈՎ ԵՎ ԱՎԵՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Սեպտեմբերի 17-ի գիշերը Չիլիում տեղի է ունեցել երկրաշարժ, որի մագնիտուդը կազմել է 8,3: Ցնցումների էպիկենտրոնը գտնվել է Իլյապել քաղաքից 54 կիլոմետր հյուսիս-արեւմուտք եւ մայրաքաղաք Սանտյագոյից՝ 228 կիլոմետր հյուսիս ընկած շրջանում: Երկրաշարժին հաջորդել է տասնյակ հետցնցումներ: Չիլիի արտակարգ իրավիճակների ազգային ծառայությունը հաղորդել է ցունամիի 4,5 մետրանոց ալիքների մասին, որոնք հարվածել են Կոկիմբո քաղաքին:

Զոհերի եւ ավերվածությունների մասին դեռեւս ստույգ տվյալներ չկան:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿՐԹԱԿԱՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱՆԻՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁՆ Է'Լ ԱՎԵԼԻ ԿԱՎԵԼԱՆԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր հերթին, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն հայտարարեց, որ 2015-2016 թվականներին ուսուցիչների աշխատավարձը երկու անգամ կբարձրացվի: Նրա խոսքերով, ուսուցչի բազային աշխատավարձն ավելացվել է 34 տոկոսով, իսկ ըստ կատեգորիայի, հավելավճարով ավելացումը կազմել է 180-250 եւ մինչեւ 300 լարի:

«Նոր ուսումնական տարվա մեկնարկով գործարկվում է մեծ կարեւորության ծրագիր: Մշակվել է համակարգ, որը լրիվությամբ կարգավորում է մանկավարժության եւ մասնագիտության հետ կապված խնդիրները: Դա համալսարանական ծրագրից մուտք է մասնագիտության մեջ, գործող ուսուցիչների մասնագիտական զարգացումն է եւ գնահատման համակարգը, որի շրջանակներում, պետությունը կկարգավորի աշխատավարձի քաղաքականությունը: Ելնելով դրանից՝ արդեն սեպտեմբերից կգործի ծրագրի աշխատավարձին վերաբերող հատվածը: Նոր ուսումնական տարում ուսուցիչների աշխատավարձը երկու անգամ կբարձրացվի, եւ այն կհամապատասխանի Վրաստանում միջին աշխատավարձի մեծությանը»,- հայտարարեց Թամար Սանիկիձեն:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԹԻՆԱ ԽԻԴԱՇԵԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ՀՈՒՅՍ ՈՒՆԻ ՇՈՒՏԱՓՈՒՅԹ ԱՆԴԱՄԱԿՑԵԼ ՆԱՏՕ-ԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Մենք խնդրում ենք ՆԱՏՕ-ին, որպեսզի Վրաստանի թեման ընդգրկվի ՆԱՏՕ-ի՝ Վարշավայում կայանալիք գագաթաժողովի ծրագրում: Մենք ցանկանում ենք Չեռնոգորիայի հետ նույն խմբում լինել ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում: Մենք անդամակցություն ենք ակնկալում, ձգտում ենք ՆԱՏՕ-ի անդամ դառնալ Ռուսաստանի գործողությունների պատճառով: Այժմ տեսնում ենք՝ ինչ է տեղի ունենում Ուկրաինայում, հասկանում ենք՝ ինչ կարող է տեղի ունենալ Մոլդովայում, եւ Վրաստանը հաջորդն է լինելու»,- ասաց Վրաստանի պաշտպանության նախարարը:

ՏԱՐԱԴՐԱՄ

ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԿՐԿԻՆ ՆՎԱՋԵՑ

Սեպտեմբերի 17-ի դրությամբ, Վրաստանի ազգային տարադրամի՝ լարիի կուրսի անկումը շարունակվում է: Փոխանակման կետերում մեկ դոլարի դիմաց տրվում է 2,48 լարի, իսկ կոմերցիոն բանկերում՝ 2,5 լարի:

Հատկանշական է, որ լարիի կուրսի, կարելի է ասել աննախադեպ, անկումը տեղի է ունենում ազգային տարադրամի ներդրման 20-րդ տարելիցին:

Ճիշտ է, նման կտրուկ նվազեցում վավերացվել էր նաեւ 1998 թվականին: Այն ժամանակ տարադրամի կուրսի անկումը սկսվեց 1998 թվականի դեկտեմբերին եւ հաջորդ տարվա փետրվարին, դոլարի համեմատությամբ, այն կազմում էր 2,45 լարի, ներկայիս ցուցանիշին գրեթե հավասար:

Մասնագետները լարիի կուրսի անկումը առնչում են նաեւ դրամական փոխանցումների նվազեցման հետ: Ինչպես տեղեկացնում է Վրաստանի ազգային բանկը, 2015 թվականի հունվար-հուլիսին, դրամական փոխանցումների էլեկտրոնային համակարգերի օգնությամբ, արտասահմանից վրացական առեւտրային բանկեր է փոխանցվել 632 մլն դոլար:

Ընթացիկ տարվա յոթ ամսում փոխանցումների ծավալը 202,3 մլն դոլարով կամ 24,2 տոկոսով պակաս է, քան 2015 թվականի հունվար-հուլիսին:

Այս տարվա հունվար-հուլիսին Ռուսաստանից Վրաստան է փոխանցվել 247,7 մլն դոլար, ինչը կազմում է փոխանցումների համակարգով ստացված փողերի ընդհանուր ծավալի 39,2 տոկոսը, ԱՄՆ-ից Վրաստան է փոխանցվել 55,8 մլն դոլար (8,8 տոկոս), Հունաստանից՝ 87,1 մլն դոլար (13,8 տոկոս), Իտալիայից՝ 60,6 մլն դոլար (9,6 տոկոս):

2015 թվականի հունվար-հուլիսին Վրաստանից արտասահմանյան երկրներ է փոխանցվել 97,4 մլն դոլար, ինչը 2,1 մլն դոլարով ավելի է, քան 2014 թվականի հունվար-հուլիսին:

Վրաստանի էկոնոմիկայի նախարար Դմիտրի Քումսիշվիլին, մեկնաբանելով լարիի կուրսի հերթական անկումը, հայտարարեց, որ այն մոտ հեռանկարում կկարգավորվի: «Ազգային տարադրամի վրա ճնշումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է եւ, ելնելով ներկա իրավիճակից, կարելի է կանխագուշակել, որ լարիի կուրսը մոտ հեռանկարում կամրանդվի: Անհրաժեշտության դեպքում, մենք կարող ենք դիմել պետբյուջեի հստակեցմանը, թեպետ տվյալ պահին նման անհրաժեշտություն չկա»,- հայտարարեց նախարարը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Թամար Սանիկիձեն, Վրաստանում «Բրիթիշ պետրոլիում» ընկերության միջազգային հարցերի տնօրեն Գիա Ղվալաձեն եւ Վրաստանի տեխնիկական համալսարանի ռեկտոր Արչիլ Փրանգիշվիլին ստորագրեցին եռակողմ համաձայնագիր:

Այն առնչվում է մասնագիտական կրթության զարգացման ոլորտում միջազգային չափորոշիչների կրթական նոր նախագծին: Ձեռք բերած պայմանավորվածության համաձայն, տեխնիկական համալսարանի բազայի վրա կգործի կրթական նոր կենտրոն, որը ուսանողներին կառաջարկի միջազգային չափորոշիչներով մասնագիտական կրթական ծրագիր:

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ԱՅՆ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Եվրամիությունը Վրաստանում սկսում է գյուղի զարգացման նոր նախագիծ, որը իրականացվելու է եվրոպական հարեւանությամբ քաղաքականության, գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման (ENPARD) նախագծի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի գյուղատնտեսության նախարարությունը, նախագծի արժեքը կազմում է 3 միլիոն եվրո: Նախագծի նպատակն է աջակցություն ցուցաբերել տեղական ինքնակառավարմանն այն հաշվով, որպեսզի իրենք կարողանան սահմանել երկրամասի առաջնահերթությունները եւ իրականացնել տեղական զարգացման ռազմավարությունը:

Նախագծի իրականացումը սկսվում է երեք պիլոտային ծրագրերով, որոնք կիրականացվեն Կախեթիի երկրամասի Լագոդեխիի, Մցխեթա-Մթիանեթիի տարածաշրջանի, Ստեփանծմինդայի եւ Սամցխե-Ջավախեթիի երկրամասի Բորժոմիի մունիցիպալիտետներում:

Նախագծի շրջանակներում, վերոնշյալ մունիցիպալիտետներում կստեղծվեն տեղական գործող խմբեր, որոնք կհամալրվեն մունիցիպալիտետի մասնավոր հատվածի եւ համայնքի ներկայացուցիչներով: Վերոնշյալ խմբերը պատասխանատվություն են կրելու տեղական զարգացման ռազմավարության մշակման եւ իրացման հարցում:

Կկառուցվեն հյուրանոցներ, կզարգացվի էկոտուրիզմը: Դա կնպաստի գյուղերում գործազրկության նվազեցմանն ու աղքատության հաղթահարմանը: Շահագրգռված անձինք կանցնեն հատուկ վարժանքներ բիզնես-ծրագրերի կազմման, նախագծերի եւ բյուջեի մշակման հարցերով: Մրցույթներում հաղթանակած նախագծերը կստանան դրամաշնորհներ:

Բորժոմիում ծրագրված նախագիծը իրականացնելու է շոտլանդական Mercy Corps կազմակերպությունը:

Նշենք, որ ENPARD-ի նախագծի արժեքը 52 միլիոն է, այն Եվրամիությունն իրականացնում է Վրաստանի կառավարության հետ միասին եւ ուղղված է երկրի գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը: Մասնավորապես, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը, գյուղատնտեսության նախարարության հնարավորությունների զարգացմանը եւ այլն:



«ԲՈՒՆԳԻ» ԴԵՏԱԼՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին Թբիլիսիում մասնակցեց քաղաքացիական օդանավերի համար դետալներ արտադրելու բարձրտեխնոլոգիական ձեռնարկության կառուցման հիմնարկեքի արարողությանը: Ավիադետալները, որոնցից օգտվելու են համաշխարհային այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Boeing-ը, Bombardier-ը, Sukhoi-ը, Airbus-ը, պատրաստվելու են բաղադրանյութերից՝ ELBIT Cyclone համաշխարհային ապրանքանիշի ներքո:

Ելույթ ունենալով արարողությանը՝ Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց. «Այս կարեւորագույն նախագիծն իրականացվում է Վրաստանի Գործընկերային հիմնադրամի եւ իսրայելական ELBIT Systems-Cyclone ընկերության փոխգործակցությամբ: ELBIT Systems-ը աշխարհահռչակ ընկերություն է, որը պաշտպանական համակարգերի խոշորագույն մատակարարն է առաջատար այնպիսի երկրների համար, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Կանադան, Միացյալ Թագավորությունը»:

Ձեռնարկությունում աշխատանքի է անցնելու 300 մարդ, որոնց պատրաստելու են Իսրայելից հրավիրված առաջատար մասնագետները: Ավիացիոն դետալների արտադրման ձեռնարկության կառուցումը կավարտվի 2017 թվականին:

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԲԱԽՈՒՄ ՓՈԹԻՈՒՄ

Փոթի քաղաքում, մարդատար գնացքի եւ ջերմաքարշի բախումից հետո, հինգ մարդ հայտնվել է հիվանդանոցում:

Ջերմաքարշը մխրճվել է կառամատույցից հեռացող «Փոթի - Թբիլիսի» գնացքի մեջ, հինգ մարդ վնասվածքներ է ստացել:

Միեւնույն ժամանակ, «Վրաստանի երկաթուղի» բաժնետիրական ընկերությունը պարզաբանել է, որ գնացքների բախման պատճառ է դարձել մասնավոր ընկերությանը պատկանող ջերմաքարշի կողմից երթեւեկության կանոնների խախտումը:

ՀՐԱՁԵՆԻ ԿԱՄԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ

Նինոծմինդայի, Ախալքալաքիի, Ասպինձայի, Ախալցիխեի, Ադիգենիի եւ Բորժոմիի շրջանների շուրջ 30 բնակիչ կամավոր հանձնել է հրազեն ու զինամթերք: Ինչպես տեղեկացրել է ՆԳ նախարարությունը, վերոնշյալ շրջանների բնակիչները հանձնել են 8041 մարտական փամփուշտ, 18 արկ, 77 ռռնակ, 8 կարճակոթ հրացան, 400 գրամ տրոտիլ, 25 պայթուցիչ, մեկ հակատանկային ռռնակ, հակատանկային ռռնակների 9 պայթուցիչ եւ մեկ հակատանկային ական: Հետաքննությունը տարվում է հրազենի եւ զինամթերքի ապօրինի ձեռքբերման պահպանման հոդվածով:

ԱՊՕՐԻՆԻ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԾԱԼԿԱՅՈՒՄ

Իրավապահ մարմինների աշխատակիցները, ապօրինի ձկնորսության մեղադրանքով, Ծալկայում ձերբակալել են Մնացական Ս.-ին: Ձերբակալվածի մեքենայում հայտնաբերվել է էլեկտրաշոկի սարք եւ մոտ 40 կիլոգրամ ձուկ՝ 3 հազար լարի ընդհանուր արժողությամբ:

Հետաքննությունը տարվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով:

ՀԱՅԱՍՏԱՆ

ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ. «ԷԼ ԱՎԵԼԻ ԵՆ ԽՈՐԱՆՈՒՄ ՀԱՅ-ՎՐԱԾԱԿԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր կողմից Վրաստանը հյուրընկալեց Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանին: Աշխատանքային այցով Վրաստանում եղան Հայաստանի արդարադատության, կրթության ու գիտության, գյուղատնտեսության, առողջապահության, էկոնոմիկայի նախարարները, Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբի եւ պաշտպանության նախարարության պատվիրակությունները, երկրի գլխավոր դատախազը:

Կարծում եմ՝ թվարկումն արդեն տպավորիչ է: Այն ցույց է տալիս նաեւ մեր երկու երկրների միջեւ համագործակցության զանգվածայնությունը: Թեպետ, պետք է ասել, որ երկու կողմերն էլ հստակորեն գիտակցում են միջպետական, միջխորհրդարանական, մշակութային, կրթական եւ մյուս կապերի էլ ավելի խորացման անհրաժեշտությունը: Ըստ երեւույթին, հենց դրանով էլ պայմանավորված էր այն փաստը, որ գրեթե բոլոր այցելությունների ընթացքում՝ Երեւանում, թե Թբիլիսիում, ստորագրվել են համագործակցության խորացմանն ուղղված բանաձեւեր, հուշագրեր, այլ փաստաթղթեր:

Նաեւ կընդգծեի Հայաստանի եւ Վրաստանի բարձրագույն ղեկավարների միջեւ անձնական ջերմ հարաբերությունները: Դրա վառ վկայությունը հուլիսի 27-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու կողմից Հայաստանի վարչապետին ուղարկված անձնական հրավերն էր: Այդ աշխատանքային այցի շրջանակներում էլ երկու երկրների վարչապետերը կարողացան կարգավորել մեզ համար բավականին ցավոտ հարցերից մեկը. նրանք միասին եղան Լարսի սահմանային անցակետում, հստակություն մտցրին ավտոմեքենաների՝ անցակետի հատման ընթացակարգերում:

Ինչպես տեսնում եք, տարին բավականին արգասաբեր է հայ-վրացական բոլոր մակարդակներով փոխհամագործակցության տեսանկյունից:

- Ինչպես հայտնի է, Վրաստանը կողմնորոշված է Եվրամիության եւ ՆԱՏՕ-ին անդամակցությանը, ստորագրել է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը: Իսկ Հայաստանը դարձավ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ, իսկ մինչ այդ անդամակցվեց ՀԱՊԿ-ին: Կողմնորոշումների տարբերությունը ակնհայտ է, սակայն, դա ի՞նչ ազդեցություն կարող է գործել երկու երկրների հարաբերությունների վրա: Այդ տարբերությունը որքանո՞վ է հնարավոր օգտագործվի ի շահ երկու երկրների: Եվ, ընդհանրապես, ի՞նչ կասեք հայ-վրացական համատեղ նախագծերի վերաբերյալ:

- Վերեւում նշեցի, այս տարվա անցած ժամանակաշրջանում երկու երկրների միջեւ տարբեր ոլորտներում նշանակալի քայլեր կատարվեցին համագործակցության է՛լ ավելի խորացման ուղղությամբ: Բարձր մակարդակի գրեթե բոլոր հանդիպումներում ասվել է, որ Հայաստանի՝ Եվրասիական եւ Վրաստանի՝ Եվրամիության կողմնորոշումը ոչ միայն չի արգելակի, այլեւ, ընդհակառակը, կխթանի երկկողմ համագործակցությունը: Նաեւ բարձր մակարդակով նշվել է, որ թե՛ Հայաստանը, թե՛ Վրաստանը Եվրասիական եւ Եվրամիության միտվածությունը կարող են ու պետք է օգտագործեն ի շահ երկու երկրների: Խոսքը վերաբերում է առեւտրա-տնտեսական, տրանսպորտային եւ այլ հարցերին: Երկկողմ մշակվում են նույնիսկ նախագծեր վերոնշյալ կողմնորոշումների նպատակամղված օգտագործման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է համատեղ ծրագրերին, ապա կարող եմ ասել, որ այդ ուղղությամբ էլ նշանակալից աշխատանքներ են տարվում: Բավական է նշել Բագրատաշեն-Սադախլո սահմանային անցակետում «Բարեկամության կամրջի» շինարարության, Հայաստանից նոր բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի անցկացման, գյուղատնտեսության ոլորտում համատեղ լաբորատորիաների հիմնման եւ այլ նախագծեր: Համատեղ ծրագրերի իրականացման շուրջ առանձին պայմանավորվածություններ են ձեռք բերվել կոնկրետ նախարարությունների ու գերատեսչությունների միջեւ:

- Վերջին շրջանում Վրաստանում բավականին մեծ ակտիվություն են ցուցաբերում հայաստանցի գործարարները: Ձեր կարծիքով, որքանո՞վ է հեռանկարային Վրաստանում հայաստանցիների, իսկ Հայաստանում՝ վրաստանցիների գործարարական գործունեությունը:

- Ընդհանրապես, Վրաստանում հայաստանցի եւ Հայաստանում վրաստանցի գործարարների ակտիվացումը կարելի է միայն ողջունել: Իրոք, այդ տեսանկյունից բավականին տեղաշարժեր են նկատվել: Դրան մեծապես նպաստում են երկու երկրներում գործող օրենսդրությունները: Թեեւ հարկ է նշել, որ երկու երկրներում ներկայիս տնտեսական բարդությունների, տարադրամի կուրսի տատանումների պատճառով այդ ակտիվությունն ինչ-որ չափով նվազել է, սակայն հուսով ենք, որ դա ժամանակավոր բնույթ ունի, եւ առաջիկայում այդ ուղղությամբ առաջընթացը առավել նկատելի կլինի:

- Դուք՝ որպես Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան, ամենայն հավանականությամբ, ուշադրությամբ հետեւում եք Վրաստանի ներքաղաքական իրավիճակին: Հակիրճ՝ ինչպե՞ս կբնութագրեիք այն: Եվ դրանից բխող հաջորդ հարցը. Ձեր կարծիքով, ի՞նչ դեր է կատարում վիրահայ համայնքը վրաց ներքաղաքական կյանքում, որքանո՞վ է այն ինտեգրված երկրի հասարակական կյանքում:

- Մենք ուշադրությամբ հետեւում ենք Վրաստանի ներքաղաքական զարգացումներին, սակայն դրա բնութագրումից թույլ տվեք հրաժարվել: Դա Վրաստանի ներքին գործն է, եւ ոչ մեկն իրավասու չէ միջամտել:

Իսկ ինչ վերաբերում է վիրահայության դերին ու վրաց հասարակությունում նրա ինտեգրման մակարդակին, ապա ասեմ, որ Թբիլիսիում, Բաթումիում, նաեւ Ախալցիխեում ինտեգրման մակարդակը անհամեմատ բարձր է մյուս հայաբնակ վայրերի համեմատությամբ: Դա առաջին հերթին պայմանավորված է քաղաքաբնակ հայերի կողմից վրաց պետական լեզվի իմացությամբ: Որքանով կարողացա նկատել, լեզվի իմացության առումով Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ծալկայի, մյուս հայահոծ բնակավայրերի հայերի հաջողությունները, համոզված եմ, մոտ ապագայի հարց է: Թեպետ հարկ եմ համարում նշել, որ վերոնշյալ բնակավայրերում հայ երիտասարդության շրջանում վրաց լեզվի տիրապետման հարցով նկատելի տեղաշարժ է կատարվել: Դրա վկայությունն է թեկուզ այն, որ այդ վայրերից շատ երիտասարդներ սովորում են Թբիլիսիի, Բաթումիի, Ախալցիխեի տարբեր բուհերում:

Միշտ հարկ է հիշել, որ վիրահայությունը յուրատեսակ կամուրջ է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Կարծում եմ հենց դա է վիրահայության պատմական առաքելությունը. հնարավորինս ուժեղացնել եւ խորացնել երկու երկրների բազմաբեւեռ փոխհարաբերությունները:

Հայ-վրացական պաշտոնական ցանկացած մակարդակի հանդիպումներին միշտ բարձրացվել է վիրահայությանն առնչվող թեման: Ավելին, ծրագրվել եւ անցկացվել են հայ-վրացական պաշտոնական համատեղ այցելություններ Վրաստանի հայաբնակ երկրամասեր, հանդիպումներ տեղի բնակիչների հետ: Այնպես որ, Հայաստանի իշխանություններն էլ իրենց հերթին անուշադրության չեն մատնում վիրահայերին հուզող հիմնախնդիրները եւ իրենց վրաց գործընկերների հետ հանդիպումներում քննարկում են համայնքին աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները:

- Գաղտնիք չէ, որ Վրաստանի հայազգի շատ քաղաքացիներ Ռուսաստանում աշխատելու նպատակով ստացել են Հայաստանի քաղաքացիություն: Վրաստանի օրենսդրությամբ նմանները ավտոմատորեն զրկվում են Վրաստանի քաղաքացիությունից, ինչը լրացուցիչ հիմնախնդիրներ է առաջացնում: Հավանաբար, այդ հարցին առնչվել է նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանությունը: Ի՞նչ խորհուրդ կտայիք այդ մարդկանց, ինչպե՞ս վարվել:

- Իրոք, Վրաստանի օրենսդրությամբ երկքաղաքացիություն նախատեսված չէ, եւ, գործող օրենքի համաձայն, այլ երկրի քաղաքացիություն ընդունած անձը ավտոմատ կերպով զրկվում է Վրաստանի քաղաքացիությունից: Դուք իրավացի եք, Վրաստանում Հայաստանի դեսպանությունն էլ հաճախ է առնչվել այդ հարցին: Մենք մեր ուժերի ներածին չափ, մեր հնարավորությունների եւ իրավասությունների սահմաններում փորձում ենք ոչ թե խորհուրդներ տալ, այլ կոնկրետ քայլեր ձեռնարկել ու աջակցել քաղաքացիներին իրենց մոտ առկա խնդիրների լուծման հարցում:

Բնականաբար, վրացական իշխանություններին մենք չենք կարող պարտադրել՝ փոփոխել օրենսդրությունը, բայց վերոնշյալ թեմայով բազմաթիվ բանակցություններ են տարվել, որոնց արդյունքում, վրացական իշխանությունները բավականին հեշտացրել են նման մարդկանց Վրաստանում կեցության թույլտվության հանձնման ընթացակարգը: Քիչ չեն եւ այն վիրահայերը, ում, որպես արդեն Հայաստանի քաղաքացիներ, բացառության կարգով Վրաստանի նախագահի կողմից շնորհվեց Վրաստանի քաղաքացիություն: Արդյունքում, Վրաստանում ապրող Հայաստանի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը Վրաստանում է գտնվում արդեն օրինական հիմունքներով, այստեղ կարող է ոչ միայն ապրել, այլեւ աշխատել:

- Պատահական չէ, որ վերեւում ընդգծվեց տարվա հագեցվածությունը: 2015 թականին համայն հայությունը նշեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Համազգային շարժումից անմասն չմնաց նաեւ վիրահայությունը: Դուք՝ որպես Վրաստանում Հայաստանի դեսպան, ինչպես կգնահատեիք վիրահայության շրջանում Մեծ եղեռնի մեկդարյա տարելիցին նվիրված միջոցառումները:

- Իրոք, այս տարին առանձնահատուկ է յուրաքանչյուր հայի համար: Այն յուրովի հարգագումարեց անկախության երկու տասնյակ տարիների ձեռքբերումները՝ ինչպես արտաքին քաղաքական, այնպես էլ ներքաղաքական ոլորտում, ի հայտ բերեց թերացումներ, բացթողումներ:

Վիրահայությունն, անշուշտ, իր նշանակալի լուման ներդրեց Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումներում: Ասեմ, որ արդյունավետ աշխատեց 100-ամյակի առիթով ստեղծված հանձնաժողովը, որում ընդգրկված էին վիրահայերի շրջանում ամենահեղինակավոր մարդիկ բոլոր տարածաշրջաններից: Այդ հանձնաժողովի կազմում էինք նաեւ ես ու Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Առանց խորանալու մանրամասների մեջ, ասեմ, որ Թբիլիսիում, Բաթումիում, Սամցխե-Ջավախեթիի եւ Քվեմո Քարթլիի տարածաշրջանների հայաբնակ վայրերում գրեթե ամենուրեք հարյուրամյա տարելիցի առթիվ ացկացվեցին բազմաթիվ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, գրական-մշակութային երեկոներ, ներկայացումներ:

Առանձնապես տպավորիչ էին Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան թատրոնի, «Հայարտուն» կրթամշակութային կենտրոնի, Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մշակույթների տների, Բաթումիի հայ համայնքի եւ մյուսների կողմից կազմակերպած միջոցառումները: Մեծ էր «Վրաստան» թերթի ներդրումը, որը թերթի գրեթե բոլոր համարներում անդրադառնում էր այդ թեմային, իսկ ապրիլին լույս ընծայեց հատուկ երկլեզու համար՝ նվիրված Ցեղասպանությանը: Շնորհակալություն եմ հայտնում նաեւ «Կամուրջ» եւ «Վերնատուն» գրական հանդեսներին:

Մի խոսքով, վիրահայությունը մեր համազգային ցավի թեմային անդրադարձավ ծավալուն ու բազմաբնույթ:

- Դուք բացառիկ անձնավորություն եք: Միայն նման մարդը կարող էր դառնալ շուրջ 50 համաշխարհային ռեկորդների հեղինակ, օլիմպիական խաղերի ու աշխարհի բազմակի չեմպիոն: Թեպետ, ժամանակի ընթացքում բացահայտվեցին Ձեր մյուս շնորհները, մասնավորապես՝ լիդերության ունակությունները, երբ դարձաք ԱՄՆ-ում հայկական համայնքի ղեկավար: Ձեր այդ ունակությունների շնորհիվ նշանակվեցիք Հայաստանի նախագահի խորհրդական, այնուհետեւ՝ Հայաստանի սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար, իսկ այսօր դրանք կիրառում եք դիվանագիտության ոլորտում: Լսել եմ, որ շնորհված եք լեզուները դյուրությամբ յուրացնելու ունակությամբ: Հիանալի տիրապետում եք ռուսերենին եւ անգլերենին: Հիմա Դուք աշխատում եք Վրաստանում, չե՞ք փորձել, արդյոք, Ձեր այդ ունակությունը օգտագործել վրաց լեզվի ուսուցման համար:

- Իհարկե, փոքր-ինչ չափազանցրեցիք, այդուհանդերձ, շնորհակալ եմ գնահատանքի համար: Ասեմ, որ վրացերեն չիմանալու հանգամանքը չխանգարեց, որ հեշտ հարմարվեմ Վրաստանի կյանքին: Դրան մեծապես նպաստեցին Վրաստանի իշխանության ներկայացուցիչների բարյացակամ վերաբերմունքը, փորձառու դիվանագետների խորհուրդները, իրենց դերը ունեցան նաեւ իմ անձնական կապերը:

Ճիշտ է, փորձում եմ սովորել վրաց լեզուն, սակայն Վրաստանում բնակվող իմ բարեկամները, ինչպես նաեւ հայ համայնքի մյուս ներկայացուցիչները ինձ «չեն օգնում» այդ հարցում. մեր հանդիպումների ժամանակ խոսում են հայերեն: Բայց առանց կատակելու էլ ասեմ, որ համոզված եմ, որ ամեն ինչ լավ կլինի, եւ որոշ ժամանակ անց կկարողանամ վրացիների հետ հաղորդակցվել իրենց մայրենի լեզվով:

- Մինչեւ դեսպան նշանակվելը Վրաստանում եղե՞լ եք:

- Իհարկե, շատ եմ եղել: Դեռ դպրոցում սովորելու տարիներին, արձակուրդներս անցկացնում էի Թբիլիսիում՝ մորաքրոջս մոտ: Այստեղից են գալիս վրաց լեզվին իմ մասնակի ծանոթության արմատները: Լավ հիշում եմ պապիս խոսքերը. «Ցանկացած հայ, անկախ բնակության վայրից, թեկուզ մեկ անգամ պետք է լինի Վրաստանում: Ոչ միայն նրա համար, որ Վրաստանը հարեւան քրիստոնեական երկիր է, այլեւ նրա համար, որ այնտեղ շատ հայեր են ապրում»:

- Մեր ընթերցողները քաջատեղյակ են Ձեր կենսագրությանը, այնուամենայնիվ, չի բացառվում, որ կարող են լինել մանրամասներ, որոնց մասին ինքներդ կցանկայիք պատմել:

- Հավանաբար, ձեր ընթերցողներն ինձ ճանաչում են դեռ այն ժամանակներից, երբ ես ակտիվ էի սպորտում, սակայն առավել երիտասարդ սերնդի մեջ կան մարդիկ, ովքեր իմ մասին չգիտեն, կամ ճանաչում են վերջին շրջանում իմ զբաղեցրած պաշտոններով:

Ծնվել եմ Լենինականում: Կնոջս՝ էլեոնորայի հետ ունենք երեք որդի, որոնցից երկուսը նույնպես սպորտի ոլորտում են զբաղված: Միջնեկը՝ Նորայրը, ապրում է ԱՄՆ-ում, այս տարի համաամերիկյան խաղերում դարձավ ծանրամարտի չեմպիոն: Կրտսեր որդիս՝ Միքայելը, ով ապրում է մեզ հետ՝ Թբիլիսիում, տեղի ակումբներից մեկում բասկետբոլ է խաղում:

Այնպես որ, սպորտը ինձ ուղեկցում է ողջ կյանքիս ընթացքում, եւ հպարտ եմ, որ այն նշանակալից տեղ է զբաղեցնում նաեւ իմ զավակների կյանքում:

- Ավանդական հարց. առաջիկայում ինչպիսի՞ ծրագրեր ունեք:

- Կոնկրետ ծրագրեր են մշակվում տնտեսական, առեւտրական, տրանսպորտային, կապի ոլորտներում համագործակցության խորացման թեմայով: Ծրագրում ենք նաեւ անցկացնել համատեղ կրթական, մշակութային, գեղարվեստական մի շարք միջոցառումներ, ցուցահանդեսներ: Մի խոսքով, անելիքները շատ են, ուղղակի դրանց իրականացման համար պետք է կոնկրետ քայլեր ձեռնարկվեն:

- Ի՞նչ կցանկանայիք ասել «Վրաստան» թերթի ընթերցողներին, բոլոր վիրահայերին:

- Եվս մեկ անգամ, օգտվելով առիթից, բոլոր վիրահայերին շնորհավորում եմ Հայաստանի Անկախության 24-ամյակի առթիվ: Բարեկամնե՛ր, հիշեք, որ Վրաստանի հասարակական կյանքում ձեր դերի մեծացմամբ դուք նշանակալի ազդակ կհաղորդեք հայ-վրացական ամենատարբեր մակարդակներում հարաբերությունների խորացմանը: Այսինքն, այդ դեպքում դուք մեծ ավանդ կներդնեք ինչպես ձեր ծննդավայր Վրաստանի, այնպես էլ՝ Մայր հայրենիք Հայաստանի առաջընթացում:

Հարցազրույցը վարեց
ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ